

Հավելված
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և
արտադրական ենթակառուցվածքների նախարարի
2017 թվականի նոյեմբեր «07» N 196 հրամանի

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՏՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ
ԹԵՄԱՏԻԿ ՀԱՐՑԱՇԱՐ**

Մասնագիտական հարցեր

1. Վարքագծի կանոնները կարգավորում են.
2. Միևնույն անշարժ գույքի համար, գնահատման տարբեր մեթոդներով հաշվարկված առավելագույն և նվազագույն արժեքների միջև շեղումը չի կարող գերազանցել.
3. Երկու տարբեր գնահատողների կողմից միևնույն անշարժ գույքի համար, միևնույն ժամանակահատվածում (որի ընթացքում տվյալ անշարժ գույքի շուկայում գների էական փոփոխություններ տեղի չեն ունեցել), գնահատման հաշվետվության արդյունքում ձևավորված (հաշվարկված) արժեքների միջև թույլատրելի շեղումը չի կարող.
4. Գնահատողը այլ գնահատողի գնահատման հաշվետվության վերաբերյալ կարծիք կարող է տրամադրել.
5. Ո՞ր դեպքերում է թույլատրվում կատարել կրկնական գնահատում.
6. Պատվիրատուի պահանջով թույլատրվում է.
7. Գնահատման հաշվետվությունը հաստատվում է.
8. Անշարժ գույքի գնահատման արդյունքները ձևակերպվում են.
9. Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը պարտադիր չէ, որ պարունակի.
10. Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունում պարտադիր չէ նշել.
11. Անշարժ գույքի որոշվող արժեքի տեսակը գնահատման հաշվետվությունում.
12. Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունում չհիմնավորված մեկնաբանությունները և եզրակացությունները.
13. Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը հաստատվում է.
14. Անշարժ գույքի գնահատման տեղեկատվական համառոտ նամակը.
15. Եկամտային մեթոդով անշարժ գույքի շուկայական արժեքը որոշվում է.
16. Եկամտային մեթոդի շրջանակներում ինչ եղանակներ են օգտագործվում
17. Պոտենցիալ համախառն եկամուտը հնարավոր է ստանալ.

18. Պոտենցիալ համախառն եկամուտը հաշվարկվում է.
19. Իրական համախառն եկամուտը դա պոտենցիալ համախառն եկամուտն է.
20. Իրական համախառն եկամուտը՝ նվազեցված շահագործման և կառավարման ծախսերի չափերով.
21. Շահագործման ծախսերը ապահովում են.
22. Շահագործման երեք հիմնական ծախսերն են
23. Գույքահարկը, հողի հարկը և ապահովագրական ծախսերը համարվում են
24. Շահագործման հաստատուն ծախսերը ներառում են
25. Շահագործման հաստատուն ծախսերը՝ դրանք.
26. Շահագործման փոփոխական ծախսերը ներառում են.
27. Թվարկված ծախսերից ո՞րը անշարժ գույքի շահագործման փոփոխական ծախս չէ.
28. Շահագործման վերականգնման ծախսերը ներառում են.
29. Կառավարման ծախսերի մեջ չեն ներառվում.
30. Պոտենցիալ համախառն եկամտի կանխատեսումը, հաշվարկումը կատարվում է.
31. Թվարկվածներից ո՞րը չի ներառվում եկամտի կապիտալավերածման եղանակի կիրառման մեջ
32. Ո՞ր մեծությունների հարաբերությամբ է որոշվում անշարժ գույքի շուկայական արժեքը.
33. Կապիտալավերածման գործակիցը կիրառվում է.
34. Ո՞ր եղանակով է որոշվում կապիտալավերածման գործակիցը
35. Կապիտալավերածման գործակիցը ներառում է.
36. Կապիտալավերածման գործակցի կոմույատիվ կառուցման դեպքում, կապիտալի ստացված
37. Եկամտի դիսկոնտավորման եղանակը կիրառելիս անհրաժեշտ է.
38. Ռևերսիայի և նրա ընթացիկ արժեքների կանխատեսումը հանդիսանում է բաղկացուցիչ մաս
39. Հողամասի շուկայական արժեքը որոշվում է.
40. Վաճառքների համեմատման մեթոդի կիրառման դեպքում տեղեկատվության բավարար քանակ է համարվում
41. Վաճառքների համեմատման համար անշարժ գույքի ընտրության չափանիշ է
42. Հողամասերի համար համեմատական վերլուծության ժամանակ հիմնականում որպես համեմատման միավոր է ընտրվում.

43. Կառուցապատված հողամասերի համար համեմատական վերլուծության ժամանակ հիմնականում որպես համեմատման միավոր կիրառվում են.
44. Թվարկվածներից որո՞նք են հանդիսանում անշարժ գույքի գների վրա էական ազդեցություն ունեցող համեմատության հիմնական տարրեր.
45. Թվարկվածներից որո՞նք են հանդիսանում անշարժ գույքի գների վրա էական ազդեցություն ունեցող համեմատության հիմնական տարր.
46. Համեմատական մեթոդով որոշված արդյունքի մեծությունը ընդունվում է, եթե այն.
47. Շենքերի և շինությունների կուտակված մաշվածության մեծությունը որոշվում է գնահատման հետևյալ մեթոդի կիրառման դեպքում
48. Շենքերի և շինությունների վերարտադրման կամ փոխարինման ծախսերի հաշվարկը կատարվում է.
49. Գնահատման ծախսային մեթոդի կիրառման հաջորդական փուլերից է.
50. Շենքերի, շինությունների վերականգնման ծախսերը հաշվարկվում են.
51. Անշարժ գույքի գնահատման նպատակով վերականգնման ծախսերը հաշվարկվում են որպես.
52. Շենքերի, շինությունների վերականգնման ուղղակի ծախսերը ներառում են.
53. Շենքերի, շինությունների վերականգնման ուղղակի ծախսերը ներառում են.
54. Շենքերի, շինությունների վերականգնման ուղղակի ծախսերը ներառում են.
55. Շենքերի, շինությունների վերականգնման ուղղակի ծախսերը ներառում են.
56. Շենքերի, շինությունների վերականգնման ուղղակի ծախսերը ներառում են.
57. Որո՞նք են համարվում շենքերի, շինությունների վերականգնման ուղղակի ծախսեր:
58. Թվարկվածներից ո՞րն է շենքերի, շինությունների վերականգնման անուղղակի ծախս:
59. Շենքերի, շինությունների վերականգնման անուղղակի ծախսերի չափը որոշվում է.
60. Ձեռնարկատիրական շահույթի մեծությունը որոշվում է.
61. Վերականգնման ծախսերը անհրաժեշտ է նվազեցնել
62. Գոյություն ունեն մաշվածության
63. Շենքերի, շինությունների արժեքի նվազումը՝ կապված տեխնիկական նորարարությունների, ժամանակակից պահանջներին անհամապատասխանության և գործառնական նշանակությամբ օգտագործման կորստով, դա.
64. Շենքերի, շինությունների տնտեսական մաշվածությունը արժեքի նվազումն է

65. Շենք-շինությունների ֆիզիկական, գործառնական և տնտեսական մաշվածության հանրագումարը
66. Կուտակված մաշվածությունը, դա.
67. Վերացվող կուտակված մաշվածությունը
68. Չվերացվող կուտակված մաշվածությունը՝ դա.
69. Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման համար կիրառվում են երեք մեթոդներ՝
70. Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է.
71. Պատվիրատուի ցանկության դեպքում գնահատման հաշվետվությունը կարող է չպարունակել
72. Ո՞րն է անշարժ գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման սկզբունքը.
73. Փոխարինման արժեքը.
74. Ներդրումային արժեքը.
75. Ապահովագրական արժեքը
76. Լիկվիդացիոն արժեքը.
77. Հատուկ նշանակության անշարժ գույքը (մասնագիտացված անշարժ գույքը).
78. Հատուկ նշանակության անշարժ գույքի (մասնագիտացված անշարժ գույքի) շուկայական արժեքը որոշվում է.
79. Անշարժ գույքի շուկայական գինը.
80. Անշարժ գույքի շուկայական արժեքը.
81. Գնահատման ստանդարտը սահմանվում է.
82. Գնահատման ստանդարտի գործողությունը տարածվում է ԱՀ տարածքում իրականացվող՝
83. Շինությունների կադաստրային գնահատումը /վերագնահատումը/ կատարվում է
84. Շինությունների կադաստրային գնահատումը /վերագնահատումը/ կատարվում է
85. Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գնահատման նպատակով տեղագրության /տարածագնահատման գոտիականության/ գործակիցները սահմանվում են.
86. Շենքի, շինության գնահատման արժեքը որոշելու համար որ հանգամանքը կարող է հաշվի չառնվել.
87. Մետաղական ավտոտնակների կադաստրային գնահատման որպես ելակետային ցուցանիշ է ընտրվում
88. Բացօդյա ծածկերի կադաստրային գնահատման համար որպես ելակետային ցուցանիշ ընտրվում է.

89. Բազմաբնակարան բնակելի շենքերում գտնվող ոչ բնակելի տարածքների կադաստրային գնահատումը կատարվում է.
90. Կադաստրային գնահատման համար շինության ավարտվածության աստիճանը համարվում է մինչև 50%, եթե.
91. Կադաստրային գնահատման համար շինության ավարտվածության աստիճանը համարվում է մինչև 50-80%, եթե.
92. Կադաստրային գնահատման համար շինության ավարտվածության աստիճանը համարվում է 80% և ավելի, եթե.
93. Շինությունների կադաստրային գնահատումը կատարվում է.
94. Օրենքով նախատեսված 4-րդ կարգի վնասվածության աստիճան ունեցող շինությունների կադաստրային գնահատումը
95. Առանձին կանգնած արտադրական նշանակության հիմնական շինություններին կից անգարների, հովացուցիչների, ջրավազանների, ջերմոցների, ծածկերի և այլ շինությունների կադաստրային գնահատումը կատարվում է.
96. Առանձին կանգնած հասարակական նշանակության հիմնական շինություններին կից անգարների, հովացուցիչների, ջրավազանների, ջերմոցների, ծածկերի և այլ շինությունների կադաստրային գնահատումը կատարվում է.
97. Ստորև ներկայացված տարբերակներից որի դեպքում կապիտալիզացիայի գործակիցը կազմում է 20%:
98. Ազատ հողակտորի չափերն են 200մx381մ: Որքա՞ն է հողակտորի արժեքը, եթե 1 հա արժեքը կազմում է 8 մլն դրամ:
99. Միայն ծախսերի հաշվարկի մեթոդով գնահատման ժամանակ գնահատման ամսաթիվը ընդունվում է.
100. Ծախսերի հաշվարկի մեթոդով շինության գնահատման ժամանակ հայտնի է, որ շինության արդյունավետ տարիքը կազմում է 15 տարի, իսկ մնացած տնտեսական կյանքը^a 45 տարի: Շինության մաշվածությունը ըստ տարիքի կազմում է՝
101. Քանի՞ հեկտար մակերես ունի 845մ x 612մ չափերով հողամասը՝
102. 100մx 80մ տարածքով կառույցը հանձնվում է վարձակալմամբ տարեկան 7200դրամ մեկ քառակուսի մետրի դիմաց պայմանով, նաև եթե գույքը վարձակալի 4 տարի ժամկետով, ապա սեփականատերը զիջում է առաջին 6 ամսվա վարձը: Ըստ նշված պայմանների որքա՞ն է կազմում գույքի ամսական վարձավճարը՝
103. Գնահատող հողակտորից գանձվող տարեկան գույքահարկը կազմում է 302400 դրամ: Հարկային գնահատողը հողակտորի արժեքը ընդունել է վեջինիս շուկայական արժեքի 60%-ի չափով: Որքա՞ն է կազմում հողակտորի հաշվարկային արժեքը, եթե հարկման տոկոսադրույքը կազմում է 1.8%:
104. Ֆիզիկական մաշվածությունը անվանում է անվերականգնելի, եթե՝

105. Ֆիզիկական մաշվածությունը անվանում է վերականգնելի, եթե

106. Մեկ տարի ժամկետով շոգեբաղնիք աշխատացնելու համար նախատեսվում է համապատասխան տարածքի վարձակալում: Սպասվում է, որ հաճախորդների քանակը կկազմի օրական 50 մարդ, իսկ 1 տոմսի արժեքն է 5000 դրամ: Շոգեբաղնիքը աշխատացնելու ծախսերը, աշխատավարձը և հարկերը կազմում են եկամտի 70%-ը:

107. Անընդհատ նվազող եկամուտների հոսքը կդադարի 5 տարուց: Ընթացիկ տարվա եկամուտը կազմում է 300 000 դրամ: Որքան է եկամուտների ընթացիք արժեքը կապիտալի ուղղագիծ վերադարձի դեպքում: Ջեղչման (դիսկոնտի) դրույքը 15% է:

108. Գույքից ստացվող մաքուր գործառնական եկամուտը կազմում է 26 մլն դրամ: Շինության արժեքը կազմում է 180 մլն դրամ: Շինության համար կապիտալիզացիայի գործակիցը 12% է, հողի համար՝ 10%: Նշված մեծությունների դեպքում հողի արժեքը կազմում է.

109. Գույքից ստացվող ընդհանուր եկամուտը կազմում է 26 մլն դրամ: Հողի արժեքը 20 մլն դրամ է, շինության համար կապիտալիզացիայի գործակիցը 14% է, հողի համար՝ 12%: Նշված մեծությունների դեպքում շինության արժեքը կազմում է.

110. Վարձակալմամբ հանձնվող շենքի մակերեսը կազմում է 3.600 քմ, որից 800 քմ ազատ է, իսկ մնացածը հանձնված է մեկ քառակուսի մետրը 750 դրամ արժեքով: Ընդհանուր ծախսերը կազմում են 35%: Որքա՞ն է կազմում պոտենցիալ համախառն եկամուտը՝

111. Վարձակալմամբ հանձնվող շենքի մակերեսը կազմում է 3.600 քմ, որից 800 քմ ազատ է, իսկ մնացածը հանձնված է մեկ քառ. մետրը 750 դրամ արժեքով: Ընդհանուր ծախսերը կազմում են 35%: Որքա՞ն է կազմում իրական համախառն եկամուտը՝

112. Վարձակալմամբ հանձնվող շենքի մակերեսը կազմում է 3.600 քմ, որից 800 քմ ազատ է, իսկ մնացածը հանձնված է մեկ քառ. մետրը 750 դրամ արժեքով: Ընդհանուր ծախսերը կազմում են 35%: Որքա՞ն է կազմում մաքուր գործառնական եկամուտը՝

113. Վարձակալմամբ հանձնվող շենքի մակերեսը կազմում է 3.600 քմ, որից 800 քմ ազատ է, իսկ մնացածը հանձնված է մեկ քառ. մետրը 750 դրամ արժեքով: Ընդհանուր ծախսերը կազմում են 35%: Որքա՞ն է կազմում պարապուրդը՝

114. Ինվեստորը նախատեսում է ուսանողական թաղամասում տարածք վարձել պատճենահանման կետ աշխատեցնելու նպատակով: Նախատեսվող տարածքը կարող է ամսական սպասարկել միջին հաշվով 4.000 հոգու, որոնցից յուրաքանչյուրը կծախսի մոտ 600 դրամ: Հարկերը, վարձը և սպասարկման այլ ծախսերը կկազմեն եկամտի 60%-ը:

115. Վարձակալմամբ հանձնված գրասենյակային կառույցի ընդհանուր մակերեսը կազմում է 4.300 քմ, որից 2.150 քմ ազատ է, իսկ մնացածը հանձնված է 600 դրամ/քմ ամսավճարով: Ծախսերը ամբողջությամբ կազմում են եկամտի 45%: Որքա՞ն է կազմում իրական համախառն եկամուտը:

116. Ազատ հողակտորի չափերն են 200մx381մ: Որքա՞ն է հողակտորի արժեքը, եթե 1 հա արժեքը կազմում է 6 մլն դրամ

117. 80մx 60մ տարածքով կառույցը հանձնվում է վարձակալմամբ տարեկան 9600 դրամ մեկ քառակուսի մետրի դիմաց պայմանով, նաև եթե գույքը վարձակալվի 6 տարի ժամկետով, ապա սեփականատերը զիջում է առաջին 9 ամսվա վարձը: Ըստ նշված պայմանների որքա՞ն է կազմում գույքի ամսական վարձավճարը՝

118. Ստորև նշված պայմաններից որը գնահատողը պետք է հաշվի չառնի համեմատական մեթոդով գնահատման ժամանակ.
119. Վարձակալմամբ հանձնված գրասենյակային կառույցի ընդհանուր մակերեսը կազմում է 4.300քմ, որից 2.150քմ ազատ է, իսկ մնացածը հանձնված է 600 դրամ/քմ ամսավճարով: Ծախսերը ամբողջությամբ կազմում են եկամուտի 45%: Որքա՞ն է կազմում պարապուրդը.
120. Ճանապարհի նկատմամբ 300մ խորությամբ հողակտորի մակերեսը 105000 քմ է: Տվյալ գոտում հողակտորները գնահատվում են ճակատային մասի երկարությամբ, որը հաշվարկվում է 160000 դրամ մեկ մետրի դիմաց: Որքա՞ն է հողակտորի շուկայական արժեքը:
121. Համայնքներում ո՞ր մարմինն է տալիս շինարարության թույլտվություն
122. Ստեփանակերտում ո՞ր մարմինն է տալիս շինարարական թույլտվություն
123. Նշված իրավասություններից ո՞րն է վերապահված համայնքի ղեկավարին
124. Քաղաքների ներսում հիմնականում ինչպես են տեղադրվում ջրամատակարարման խողովակաշարերը և այլ գծային կոմունիկացիաները
125. Ո՞վ է պարտավոր ապահովել տեխնիկական հսկողությունը
126. Ո՞ր մարմինն է իրավասու շինարարության օբյեկտում ստուգում իրականացնել
127. Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար ո՞ր մարմինն է նշանակում վարչական տույժեր
128. Թվարկված փաստաթղթերից ո՞րն անհրաժեշտ չէ շինարարություն թույլտվության համար
129. Թվարկված գործունեության տեսակներից ո՞րը ենթակա չէ լիցենզավորման որպես քաղաքաշինական գործունեություն
130. Ո՞ր մարմինն է վերահսկում քաղաքաշինական գործունեության լիցենզիա ունեցող սուբյեկտների գործունեությունը
131. Համայնքներում ո՞ր մարմինն է ձևակերպում շինարարության ավարտական ակտերը^a
132. Եթե գյուղացիական տնտեսությունը իրեն սեփականաշնորհված 3 հեկտար հողատարածությունից տվյալ տնտեսական տարում եկամուտ չի ստացել, ապա
133. Մարտունու շրջանի Կարմիր Շուկա համայնքի բնակավայրի շրջագծում գինու գործարանը շենքի և շինությունների տակ զբաղեցնում է 1 հեկտար հողատարածություն, նշված գործարանը որքան հողի հարկ պետք է վճարի գյուղապետարանին զբաղեցրած 1 հեկտար հողատարածության համար
134. Հարկատու համարվող ֆիզիկական անձանց պատկանող այգետնակների գույքահարկի դրույքաչափը
135. Բազմաբնակարան բնակելի տների բնակարանների գնահատումը իրականացնելիս, որպես հիմք ընդունվում է արդյո՞ք
136. Ինչպես է կիրառվում շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցը

137. Բազմաբնակարան բնակելի տների բնակարանների գնահատման ժամանակ վերելակի առկայությունը հաշվի է առնվում արդյո՞ք

138. Ինչպես է հաշվի առնվում / հ / բնակարանի հարկայնության գործակիցը բազմաբնակարան բնակելի տների բնակարանների գնահատման ժամանակ

139. Բազմաբնակարան բնակելի տների վերջին հարկում տեղակայված բնակարանների գնահատման համար կիրառվում է արդյոք լրացուցիչ հարկայնության հետ կապված գործակից /h/

140. Ինչպե՞ս է հաշվի առնվում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների գնահատման ժամանակ շահագործման տևողությունը՝

141. Անհատական բնակելի տների գնահատումը իրականացնելիս հաշվի առնվում է արդյո՞ք

142. Ինչպե՞ս է ազդում շինանյութի տեսակը անհատական բնակելի տների արժեքի վրա

143. Կիրառվում է արդյո՞ք, հարկայնության հետ կապված գործակիցը /h/ անհատական բնակելի տների ձեղնահարկը գնահատելիս

144. Անհատական բնակելի տների, այգետնակների և նրանց կից շինությունների գնահատման ժամանակ կոմունալ ապահովվածության հետ կապված գործակիցը ազդում է .

145. Ո՞ր դեպքում է շինությունը համարվում 50-ից 80 տոկոս ավարտվածության աստիճան ունեցող.

146. Ի՞նչն է ընդունվում որպես ելակետային ցուցանիշ մետաղական շինությունների գնահատման համար

147. Անհատական բնակելի տների և այգետնակների գնահատման ժամանակ, պարիսպների առկայության դեպքում, հաշվի առնվում է արդյոք պարիսպների շինանյութի տեսակը

148. Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի գնահատման քանի խմբեր գոյություն ունի

149. Շինությունը համարվում է մինչև 50 տոկոս ավարտվածության աստիճան ունեցող.

150. Շինությունը համարվում է 80 տոկոս և ավելի ավարտվածության աստիճան ունեցող

151. Առանձին կանգնած ավտոտնակի կադաստրային արժեքը կազմում է 2450900 դրամ: Որքան է կազմում տարեկան գույքահարկը տվյալ ավտոտնակի համար:

152. Բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի կադաստրային արժեքը կազմում է 2450900 դրամ: Որքան է կազմում տարեկան գույքահարկը տվյալ բնակարանի համար:

153. Վարձակալմամբ հանձնվող շենքի մակերեսը կազմում է 3,600քառ.մ, որից 800քառ.մ. ազատ է , իսկ մնացածը հանձնված է 750դրամ/քառ.մ. արժեքով: Ընդհանուր ծախսերը կազմում են 35%:Որքան է կազմում իրական համախառն եկամուտը:

154. Ազատ հողակտորի չափսերն են 200մ. * 381մ.:Որքա՞ն է հողակտորի արժեքը, եթե 1հա արժեքը կազմում է 20,000\$:

155. Բազմաբնակարան բնակելի շենքերի ծախսային մեթոդով գնահատման ժամանակ որպես համեմատական միավոր կարող է հանդես գալ՝

156. Որքա՞ն են կազմում 10,000\$ արժողությամբ հիպոթեքի տարեկան հավասարաչափ վճարումները 3 տարվա ընթացքում, 18%-ի պայմանով՝

Օրենսդրական հարցեր

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների կարգավորման ոլորտին առնչվող օրենսդրությունը կազմված է

2. Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները.

3. Քաղաքացու իրավունակությունը ծագում է.

4. Քաղաքացու գործունակությունը լրիվ ծավալով ծագում է.

5. Քաղաքացու իրավունակությունը և գործունակությունը չեն կարող սահմանափակվել այլ կերպ, քան

6. Տասնվեց տարին լրացած քաղաքացին կարող է լրիվ գործունակ ճանաչվել, եթե

7. Խնամակալություն սահմանվում է.

8. Հոգաբարձությունը սահմանվում է.

9. Խնամակալն առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվության, իրավունք ունի՝

10. Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը

11. Իրավաբանական անձինք իրենց գործունեությամբ կարող են լինել

12. Իրավաբանական անձը սնանկ է ճանաչվում.

13. Բաց բաժնետիրական ընկերություն.

14. Փակ բաժնետիրական ընկերություն.

15. Լիակատար ընկերակցության պարտավորությունների համար ընկերության մասնակիցը պատասխանատվություն է կրում.

16. Բաժնետիրական ընկերությունը կարող է ստեղծվել կամ կազմված լինել

17. ՍՊԸ-ի մասնակիցները կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը

18. ՍՊԸ-ն իրավունք ունի վերակազմավորվել՝

19. Քաղաքացիական իրավունքի օբյեկտներն են՝

20. Անշարժ գույքը

21. Շարժական գույք է /են/ համարվում

22. Նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է.

23. Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է իր հայեցողությամբ՝

24. Տնօրինման իրավունքը՝

25. Ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը՝

26. Բաժանելի գույքի նկատմամբ ընդհանուր սեփականությունը ծագում է

27. Ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս սեփականության մնացած մասնակիցները վաճառվող բաժինը

28. Վաճառողը բաժնային սեփականության իրավունքում իր բաժինը կարող է վաճառել ցանկացած անձի, եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները գրավոր տեղեկացվելուց հետո հրաժարվել են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում

29. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը տարածվում է

30. Ընդհանուր սեփականության հասկացությունը

31. Որո՞նք են համարվում գյուղատնտեսական նշանակության հողեր

32. Որո՞նք են համարվում բնակավայրերի հողեր

33. Որո՞նք են համարվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր

34. Որո՞նք են համարվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր

35. Ինչպե՞ս են դասակարգվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը

36. Ինչպե՞ս են դասակարգվում էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների օբյեկտների կառուցման համար տրամադրված հողերը ըստ գործառնական նշանակության

37. Ինչպե՞ս են դասակարգվում հատուկ պահպանվող տարածքների հողերը ըստ գործառնական նշանակության

38. Ե՞րբ է սկսվում հողամասերի նկատմամբ իրավունքների ծագման պահը

39. Հողամասի նկատմամբ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, գրավը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այն գույքային իրավունքները ծագում է՝

40. Սերվիտուտը

41. Սերվիտուտը կարող է լինել
42. Ինքնակամ շինությունը
43. Տիրազուրկ է համարվում այն գույքը, որը
44. Պայմանագիրը կարող է կնքվել
45. Բնակելի տարածության օգտագործման իրավունքը
46. Իրավունքի գրավի դեպքում գրավի առարկա կարող է լինել միայն
47. Իրավաբանական անձանց մի քանի վայրում գտնվող անշարժ գույքի /մասնաճյուղերի/ գրավի իրավունքի պետական գրանցումը կատարվում է
48. Հիփոթեք է համարվում այն գրավը, որի առարկան
49. Հիփոթեքի պայմանագրով կարող են գրավ դրվել.
50. Հիփոթեքի պայմանագրով կարող են գրավ դրվել.
51. Սեփականության իրավունքը դադարում է.
52. Սեփականատերը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից
53. Գործարքների նոտարական վավերացումը պահանջվում է.
54. Նոտարի կողմից պետք է վավերացվի.
55. Ներկայացուցիչ է համարվում.
56. Լիազորագրի ժամկետը չի կարող ավելի լինել
57. Պայմանագիր է համարվում
58. Պայմանագիրը կարող է կնքվել
59. Փոխանակության պայմանագրով
60. Եթե ռենտայի պայմանագրով գույքը հանձնվում է վճարով, ապա կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են
61. Նվիրատվության պայմանագրով նվիրառուն դառնում է
62. Նվիրաբերության պայմանագրով գույք ձեռք բերած անձը պարտավոր է այդ գույքը օգտագործել
63. Բնակելի տարածության վարձակալը վարձատուի համաձայնությամբ
64. Անշարժ գույքի վարձակալության պայմանագրով վարձակալին են անցնում այդ գույքի նկատմամբ
65. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրով

66. Պետական գրանցման համար վարձակալության պայմանագրին կցվում է նաև
67. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով
68. Ռենտայի պայմանագիր
69. Փոխանակության պայմանագիր
70. Անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցումն ու անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայականը չեղյալ կարող են հայտարարվել միայն
71. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք կարող են փոփոխել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքի սահմանները, միավորել դրանք, ինչպես նաև բաժանել դրան մասերի
72. Համայնքի վարչական սահմաններում պետության և համայնքների սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրվում է^a
73. Շենքերի և շինությունների հատակագծերը տրամադրվում են
74. Քաղաքացին իր կողմից կառուցված բնակելի տունը ցանկանում է հանձնել վարձակալության, սակայն բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված չէ: Քաղաքացին՝
75. Անշարժ գույքի առուվաճառքի, անհատույց օգտագործման, վարձակալության, գրավի, հիփոթեքի պայմանագրերը՝
76. Ժառանգության դեպքում
77. Ժառանգությունը կատարվում
78. Ստորև նշվածներից որոնք չեն մտնում ժառանգության զանգվածի մեջ
79. Ըստ կտակի ժառանգներ կարող են լինել՝
80. Անհատ ձեռնարկատերը սնանկ է ճանչվում.
81. Քաղաքացուն՝ անհատ ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելու դեպքում նրա գույքի բացակայության կամ անբավարարության հետևանքով պարտատերերի չբավարարված պահանջներն իրենց ուժը պահպանում են.
82. Գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավուքները ենթակա են պետական գրանցման՝
83. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կատարվում է փաստաթղթերը ներկայացնելու օրվանից սկսած՝
84. Պետական գրանցման սուբյեկտները պարտավոր են
85. Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներն օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է

86. Անհատ ձեռնարկատերը գույքային պատասխանատվություն է կրում
87. Պետական գրանցման հիմնական սկզբունքներն են՝
88. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը իրականացնում է
89. Անշարժ գույքի պետական գրանցման հիմնական խնդիրներն են
90. Պետական գրանցման օբյեկտներն են՝
91. Առանց սեփականատիրոջ կամ օգտագործողի համաձայնության անշարժ գույքի կադաստրի վարչության տարածքային բաժիններում չեն ընդունվում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոփոխություններ, լրացումներ, դադարում առաջ բերող փաստաթղթեր, բացի հետևյալ դեպքերից
92. Գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունից կարող են օգտվել
93. Գրանցված անշարժ գույքի վերաբերյալ հրապարակման ենթակա չեն
94. Գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում՝
95. Անշարժ գույքի գնահատման գործունեությունն իրականացվում է
96. Ռիելթորը կարող է
97. Ռիելթորը պարտավոր է
98. Դատարանը քաղաքացուն անհայտ բացակայող է ճանաչում եթե
99. Քաղաքացին դատարանով կարող է մահացած ճանաչվել եթե՝
100. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործաքներ կնքել
101. Օտարման տեսակներ՝
102. Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է
103. Կտակի հասկացությունը
104. Անշարժ գույքի գնահատողի գործունեության լիցենզավորման կարգ
105. Ինչպե՞ս է լուծվում սեփականատիրոջ կողմից հասանելիք հողաբաժնից 20% -ից ավելի հող օգտագործելու հարցը
106. Ինչպե՞ս է լուծվում սեփականատիրոջ կողմից հասանելիք հողաբաժնից 20% -ից ավելի հող օգտագործելու հարցը

107. Որքա՞ն է սահմանվում պետության սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքի գինը
108. Արցախի Հանրապետության հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության կատեգորիաների քանի՞ խմբի է բաժանված.
109. Ո՞րն է հողերի նպատակային նշանակությունը
110. Ըստ նպատակային նշանակության հողերը դասակարգվում են
111. Որո՞նք են համարվում բնակավայրերի հողեր
112. Որո՞նք են համարվում էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր
113. Որո՞նք են համարվում հատուկ պահպանվող տարածքների հողեր
114. Ինչպե՞ս են դասակարգվում բնակավայրի հողերը ըստ գործառնական նշանակության
115. Ինչպե՞ս են դասակարգվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը
116. Որո՞նք են համարվում ջրային հողեր
117. Ինչպե՞ս են դասակարգվում հատուկ պահպանվող տարածքների հողերը ըստ գործառնական նշանակության
118. Որո՞նք են համարվում անտառային հողեր
119. Որո՞նք են համարվում հատուկ նշանակության հողեր
120. Որո՞նք են համարվում պահուստային հողեր
121. Որքա՞ն է սահմանվում պետության սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը
122. Ո՞վ է կազմակերպում աճուրդը
123. Աճուրդում հաղթած անձը քանի՞ օրվա ընթացքում պետք է վճարի սակարկությունների արդյունքում ձևավորված գինը
124. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերը ի՞նչ կարգով են տրվում վարձակալության
125. Ո՞վ է գլխավորում հողամասը վարձակալության տրամադրելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովը
126. Որքա՞ն նախավճար են մուծում մրցույթի մասնակիցները
127. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ստանալու իրավունք ունեն

128. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ստանալու իրավունք ունեն
129. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ստանալու իրավունք ունեն
130. Ովքե՞ր են իրականացնում պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերի օտարումը
131. Ո՞ր հողերի օտարումն են իրականացնում շրջանների վարչակազմերի ղեկավարները
132. Որո՞նք են համարվում պետական սեփականության հողեր
133. Որո՞նք են համարվում քաղաքային և գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողեր
134. Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը ովքեր են տրամադրում վարձակալության
135. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետության սեփականությանը պատկանող հողամասերը ովքե՞ր են տրամադրում վարձակալության
136. Ի՞նչ են ներառում իրենց մեջ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները
137. Ո՞վ է հաստատում համայնքի հողերի օգտագործման և գոտիավորման սխեման
138. Ե՞րբ է սկսվում հողամասերի նկատմամբ իրավունքների ծագման պահը
139. Գյուղատնտեսական նշանակության հողերը ըստ հողատեսքերի բաժանվում են
140. Որո՞նք են համարվում գյուղատնտեսական նշանակության հողեր
141. Որքա՞ն է սահմանված պետության և համայնքների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության ժամկետը

Իրավական ակտերի ցանկ

ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրք, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին» ԼՂՀ օրենքները և ԼՂՀ տարածքում անշարժ գույքի գնահատման ստանդարտ

Մասնագիտական գրականություն

Ի.Ֆրիդման, Ն.Օրդվեյ՝ Եկամտաբեր անշարժ գույքի գնահատում և վերլուծություն

Հ.Հարիսոն՝ Անշարժ գույքի գնահատման դասագիրք

Ս.Գրինենկո՝ Անշարժ գույքի տնտեսագիտություն

Ա.Տարասովա՝ Անշարժ գույքի գնահատում: Սեփականության կառավարում